ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
10 մայիսի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Կրթական ծրագրերի հաստատում :*
   /զեկ. Կ.Հ. Հովսեփյան, Ա. Սիմոնյան /
2. *Ֆակուլտետի ռազմավարական ծրագրի հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Պետական քննությունների և ավարտական աշխատանքների վիճակի քննարկում:*
   /զեկ. Ա.Վ. Յուզբաշյան/
4. *2015-2016 ուստարվա II ընթացիկ քննությունների, ստուգումների և քննաշրջանի գրաֆիկների հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

1. Օրակարգի առաջին հարցի առաջին մասը ներկայացրեց կադաստրի և քարտեզագրության կրթական ծրագրի պատասխանատու Կ. Հ. Հովսեփյանը: Նա նշեց, որ կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական դասընթացում կատարվել են հինգ փոփոխություն համեմատած նախորդ տարվա հետ. տվյալների հենք, ինժեներային գրունտագիտություն, գեոկոլոգիան կադաստրային գործում, հանքային ռեսուրսների կադաստր և մոնիթորինգ դասընթացները փոխարինվել են համապատասխանաբար կադաստրային

քարտեզագրում և անշարժ գույքի հաշվառում, հողային իրավունք, կառուցապատված տարածքների կադաստր, անշարժ գույքի գնահատում դասընթացներով: Ավելացվել են նաև հողաշինարարություն դասընթացը և երեք կամընտրական դասընթացներ: Օրակարգի առաջին հարցի երկրորդ մասը ներկայացրեց ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սիմոնյանը: Նա նշեց, որ համակարգչային ցանցեր դասընթացը կամընտրական բլոկից տեղափոխվել է պարտադիր դասընթացների բլոկ, իսկ կամընտրական բլոկում այն փոխարինվել է վեբ-ծրագրավորում դասընթացով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Վ. Ցուցուլյանը, Ք.Վ. Օթարյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հաստատել կրթական ծրագրերը կատարված փոփոխություններով:

2. Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Զեկուցողը անդրադարձավ ֆակուլտետի ռազմավարական ծրագրին: Նա ներկայացրեց ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի հիմնարար արժեքները, նպատակները՝ իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ, ընդլայնել ֆակուլտետի դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվումը հետազոտական աշխատանքներում, նպաստել հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Վ. Ցուցուլյանը, Ք.Վ. Օթարյանը, Կ.Հ. Հովսեփյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հաստատել ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը:

3. Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ Ա.Վ. Ցուցուլյանը: Նա նշեց, որ ավարտական աշխատանքները հանձնվել են ամբիոն, կազմվել է գրախոսների ցանկ, և հաստատումից հետո աշխատանքները կներկայացվի գրախոսներին: Պետական քննության հետ կապված զեկուցողը նշեց, որ ուսանողների հետ կազմակերվում են կոնսուլտացիոն պարապմունքներ, քննարկումներ,

այդպիսով ապարզաբանվում են անհասկանալի հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Կ. Հ. Հովսեփյան, Ք.Վ. Օթարյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հաստատել գրախոսների ցանկը:

2. Ակտիվացնել ուսանողների հետ կազմակերպվող կոնսուլտացիոն պարապմունքները:

4. Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Զեկուցողը նշեց, որ կազմվել և ուսանողներին են ներկայացվել ինչպես II ընթացիկ քննությունների և ստուգումների, այնպես էլ եզրափակիչ քննությունների գրաֆիկները: Զեկուցողը ներկա դասախոսների ուշադրությունը հրավիրեց քննական տոմսերի ստորագրված և կնքված լինելու վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ.Վ. Գուլակյանը, Ա.Վ. Ցուցուլյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել II ընթացիկ քննությունների և ստուգումների, եզրափակիչ քննությունների գրաֆիկները:

ՆԱԽԱԳԱՀ **Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**